ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին որոշման նախագծի

Ներկայացված որոշման ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից, համաձայն որի համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին ավագանու որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Նաիրի համայնքի 2022 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին որոշման ընդունումը համայնքի 2022 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: